

ՄԱՔ - ՄԱՀԱՆ



ԹԱԻՐԱ ՄԱԿԱՐԱՅԻ.

## Մ Ա. Ք - Մ Ա. Հ Ո Ւ

Դ Ա Կ Գ Ա Մ Ա Ճ Ե Կ Թ Ա Յ

Խտալիոյ պատերազմին (1859) քաջայաղթ-  
զորավարաց մին է ՄԱՔ-ՄԱՀՈՆ, Գաղղիոյ  
այս երկրորդ կայսերութեան զինուրական  
փառքերէն մէկը, որ Ա. Նափոլէնի պահծա-  
լի ժամանակները ծնաւ 1808-ին : Խւր ցեղին  
սկիզբը բուն Խոլանտայէն է, (ինչպէս Մաք-  
վերադիրն ալ կցուցանէ), որ Մթուարթեանց  
գժեաղթ տանը հաւատարիմ մնալով՝ անցաւ  
իդաղիա եւ հոն առաջ եկաւ : Մաք-Մահոնի  
հայրը՝ Գաղղիոյ սեպուհ (փեռ) էր, եւ Կարո-  
լոս Ժագաւորին բարեկամ, ուստի եւ կըր-  
ցաւ որդւոյն լաւ գաստիարակութիւն մը  
տակ Սէն-Սիրի զինուրական դպրոցին մէջ :

Ալժէրիի արշաւանաց ժամանակ սկսաւ  
առաջ երթաւ Մաք-Մահոն, եւ 1857-ին Կոս-  
տանդինա քաղաքին առման ժամանակը քա-  
ջութիւններ ցուցուց, որով եւ զինուրական  
աստիճաններու մէջ շուտով բարձրացաւ, մին-  
չեւ որ 1852-ին զօրավար (général) անուանեցաւ:

Արեւելեան պատերազմն որ բացուեցաւ՝  
Մաք-Մահոն զօրավարը 1855-ին զրկուեցաւ  
իթրիմ, ու հոն փայլեցաւ Սեպտեմբերի 8-ին  
նշանաւոր օրը, յորում իւր զինուրներովը  
յարձակեցաւ Մալաքովի վրայ, ու յետ բա-  
զում արիւնչեղութեանց յերկոցունց կող-  
մանց՝ վերջապէս տիրեց այն զօրաւոր ամրու-  
թեանցն որ Մալաքովի բանալիքը կհամա-

րուէին : Այն քաջութեանը փոխարէն ընդու-  
նեցաւ Պատուայ լեզէնի մեծ խաչը ու քա-  
նի մը ամսէն անուանեցաւ ծերակուտի ան-  
դամ (sénateur) :

1857-ին Գաղիներուն գէմ եղած արշաւա-  
նաց ժամանակ՝ Մաք-Մահոն չետեւակազօ-  
րուն զօրավարն էր, եւ մեծ ճարտարութեամբ  
Գաղիները զարկաւ ու հալածեց . որով ա-  
նուանեցաւ ընդհանուր հրամանատար ցամա-  
քային եւ ծովային զօրութեանց Ալժէրիի :

Այն մեծ պաշտօնին մէջ էր երբ կայսրը  
կոչեց զնա յիտալիա (1859) Ալպեան բանակին  
երկրորդ գնդին զօրավարելու : Ամիս մը յե-  
տոյ պատերազմի գաշտին վրայ անուանեցաւ  
Մաք-Մահոն դուիս Մանկնրայ եւ մարկշալ Գալ-  
զիոյ, արժանապէս վարձատրուելով նոյն օրը  
ցուցուցած մեծամեծ քաջութեանցը համար :

Այս զօրավարը իւր քաջութեանն ու հաս-  
տառուն բնաւորութեանը չետ՝ ունի նաեւ  
անոյշ կերպ մը, որով պատերազմէն դուրս՝  
հեղ ու ամենակիրթ անձ մի է :

Մեր ազգին վրայ եւս բաւական համարում  
կցուցընէ այս մեծահամբաւ զօրավարը, եւ  
ոչ սակաւ տեղեկութիւն ունի մեր անցեալ եւ  
այժմու պատմութեանցը, ինչպէս որ առիթ  
ունեցանք ճանչնալու՝ երբ նորա մարդասէր  
հիւրընկալութիւնը վայելեցինք իդաղզիա :

## Մ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ա

Խալիսկեան Ռւսումնաբանիս աշակերտաց արձակուրդը այս տարի պիտի լինի Յունիսի 28-ին,  
եւ պարապոյ ժամանակը պիտի վերջանայ Յգոստոսի 12-ին :

Այն ծնողը որ կամենան իւրեանց որդիքը տուն առնուլ, պէտք է հանապարիի ծախքը իհա-  
ցընեն Ռւսումնաբանիս Ցեսչին ծեռքը մինչիւ Յունիսի 20-ը, եւ Յգոստոսի 10-ին դարձընեն նորէն  
որդիքը յիւսումնաբան :